



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 19017  
Մայիս 31, 1967

Հոգեշնորհ  
Տ. Փառէն Աբեղայ Աւետիքեան  
Հոգեւոր Հովիւ Սբ. Աստուածածին Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Ուաշինկթըն.

Սիրելի Հայր Փառէն,

Ստացած ենք 1967 Փետրուար 19 թուակիր տեղեկագիրը, ստորագրուած Միական Խորհուրդի ատենապետ Պրն. Յիլիփ Օ'Կիլլեանի կողմէ, որով կը հաղորդուի թէ Յունուար 29ին գումարուած համայնքիդ Միական Ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի հինգ անդամոց անդամոց ընտրութիւնը, եւ կը խնդրուի ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Միական Ժողովը տեղի ունեցած է թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Միական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Այս առիթով կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ մօտէն չեն հետեւած թեմական Կանոնադրութեան յօդուածներուն, եւ պակասաւոր տեղեկութիւններ դրկած են Առաջնորդարան: Ուստի, այժմէն կ'ազդարարենք որ յառաջիկային կարեւորութեամբ նկատի պիտի առնենք Կանոնադրութեան տրամադրութեանց գործադրութիւնը:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել նորընտիր Դիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռախօսի թիւը:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Սբ. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Տիարք՝ Տքթ. Եզուարդ Օնանեան  
Գասպար Գասպարեան  
Յիլիփ Օ'Կիլլեան  
Ճէք Անտոնեան  
Տքթ. Հարրի Պէյքըր